ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդրի պահանջը կարելի է կռահել, օգտվելով բերված օրինակից:

Եթե k=2 և n=6, ապա կառուցվում են հետևյալ հաջորդականությունները.

1. 2
2. 1 2
3. 1 1 1 2
4. 3 1 1 2
5. 1 3 2 1 1 2
6. 1 1 1 3 1 2 2 1 1 2

Պահանջվում է գրել ծրագիր, որը k և n բնական թվերի համար կարտածի հաջորդականություններից վերջինը:

Մուտքային տվյալներ.

Մուտքի միակ տողում տրված են k և n բնական թվերը, որոնցից առաջինը չի գերազանցում 9-ը, իսկ երկրորդը-15-ը:

Ելքային տվյալներ.

Ելքում պետք է արտածել խնդրի պատասխանը:

Օրինակ.

N	stdin	stdout
1	2 6	1 1 1 3 1 2 2 1 1 2